22. ՍԻՆԱՄ ԹԱՔԱՎՈՐԻ ՀԵՔԻԱԹԸ

Գյուն-Բաթմանի[1] Սինամ թաքավորը հայերի թաքավոր էր ու էն թավուր ղոչաղ, որ սաղ աշխարհում հատը չկար . սաղ աշխարհը նրա ոտի տակ ղողում էր ու վախում նրանից։

Հենց էդ վախտը մի ուրիշ երկրում մի թաքավոր կար։ էս թաքավորը մի տղա ուներ՝ անումը Հասո։ էս Հասոն ինքը չոբան էր ու շատ ղոչաղ։ Հասոյի հոր աչքերը քոռ էին, էլ աշխարհում հեքիմ չմնաց նա բերեց, համա ոչով չկարաց լավացնի։

Մի օր թաքավորը ասեց Հասոյին.

— Ոնց որ ըլնի, ա՛յ որդի, պտի էթաս սաղ աշխարհը պտտես ու աչքերիս դեղ բերես։ էլ ի՛նչ թավուր որդի ես, որ ինձ մի լավություն էլ չպտի անես։

Ղորդ ա՝ Հասոն առաջ ինքն իրա մեջ վախեց, համա հոր խաթրը չէր կարող կոտրի. նրա խոսքը իրա համար սուրբ էր, գլուխը պտի մահի տար ու իրա հոր աչքերի համար դեղ ճարեր։

Հասոն վրեն քցած մի արա, ձեռին բռնած մի ղազանակ՝ ճամփա ընկավ, որ էթա իրա հոր աչքերի համար դեղ բերի։ Ճամփին ռաստ էկավ մի ծեր մարդու։ էն ծեր մարդը հարցրեց, թե նա ո՞ւր

---

1 Արևմուտք (Ս. Բ.)։

ա էթում։ Հասոն ասեց, որ էթում ա իրա քոռ հոր աչքերին դեղ բերելու։

Մերը ասեց.— Ա՛յ որդի, էդ ճամփով ով որ գնացել ա, էլ հետ չի էկե. մեղք ես, դու էլ կէթաս ու չես հետ գա։

Համա Հասոն էնքան սիրում էր իրա հորը, որ նրան չլսեց ու իրա ճամփեն բռնեց դնաց։ Գնաց, գնաց ճամփին մի քրդի ռաստ էկավ՝ անումը Քյալու։ Սա քառասուն հազար մարդ ուներ իրա հետ ու մարդի չէր թողնում, որ անց կենա էս ճամփով։ Հասոն դնաց ու նրանց ասեց, որ ինքը դուրս կգա էն բոլորի հետ կռվի, համա նրանք թուր-թվանք չրանացնեն կռվելիս, քառասուն հազարն էլ դաղանակներով թող դուս գան մենակ իրա վրա։

Նրանք էլ ռաղի էլան ու մեր ղոչաղ Հասոն աբեն փաթթեց թեվին, դաղանակը առավ ձեռը ու մեյդան գուս էկավ կռվի։ Հասոն ում որ դաղանակով տալիս էր, տեղն ու տեղը մեռնում էր։ Քառասուն հազարին էլ մենակ ջարգեց ու թողեց։

Հասոն էս քրդից պրծավ ու գնաց իրա ճամփեն։ Գշերը վրա հասավ, չէր գիտում, թե որդի մնա. ամեն տեղ խարաբա ու քանդված տեղեր էին. չէր կարա էնթավուր տեղերը մնա, չունքի նրա հերը ասել էր, որ խարաբա տեղ իրա չաղիրը չվեր տա, թե չէ վատ կըլնի։ Համա ի՞նչ աներ, մութն էր ու էլ ուրիշ տեղ չկար, որ վե դար։ Անճարացած էս տեղերը իրա չաղիրը տվեց ու ինքն էլ չքնեց, որ տենա ինչ ա ըլնում։ Գշերվա մի վախտ տեհավ, որ մի պառավ կնիկ էկավ։ Ինքը դև էր ու իրա ծծերը էնքան երկեն ու մենձ էին, որ մինը մի ուան էր գցել, մեկելը՝ մյուս. ատամները որ իրար չէր տալի, կրակ էր դուս գալի ու մարդի սիրտ ահ ու զարզանդ գցում։

Համա ղոչաղ Հասոն վրա պրծավ ու ասեց.

— Ինձ ճանաչում ե՞ս, ես Հասոն եմ, որ քառասուն հազար մարդուն դաղանակովս կոտորեցի. դու էկել ես, ինձ ի՞նչ պտի անես։

Էս որ ասեց, ձեռը քցեց ու նրա մի ծիծը դուս քաշեց, դեն քցեց. հենց էնա ուզում էր, որ նրա մեկել ծիծն էլ քոքըհան անի, նա Հասոյի ոտները ընկավ ու աղաչանք անելով ասեց.

— Ասսու սիրու համար, ինձ բան մի՛ անի. ինձ մոտ մի սիրուն աղջիկ կա, Գուշան թաքավորի աղջիկն ա, նրան քեզ կտամ։

Հասոն էլ նրան ձեռ չտվեց, ոտ ու ձեռը կապեց ու գնացին էս

դևի տունը։ Էկան, էկան, ճամփին Հասոն տեհավ մի չոբան, որ հեռու ոչխար էր արածացնում։ Էս չոբանը էնպես բանցր էր ու ղոչաղ, որ մարդ սիրտ չէր անի նրան մոտենա, համա Հասոն իսկի չվախեց նրանից։ Ոտները կապած պառավին մի տեղ թողեց ու ինքը գնաց, որ իմանա, թե նա ի՞նչ մարդ ա, որ էնպես ղոչաղ ա էրևում։ Էս չոբանը էն պառավի տղեն էր։ Հասոն գնաց ու նրան ասեց, որ իրա ոչխարներից կաթ կթի, ածի ամանը, որ ինքը ուտի ու հետո վե կենան կուվեն։ Հասոն կերավ պրծավ ու վե կացան, որ կռիվ պրծնեն։

Ղոչաղ Հասոն նրան վերցրեց ու գետնովը տվեց, էնպես որ նրա մի թևը կոտրվեց ու չունքի իրար խոսք էին տվել, որ ով ում վե քցի, նա նրան մորթի թրով, Հասոն թուրը քաշեց, որ մորթի. նա աղաչանք արեց, որ ների իրան ու չսպանի։ Հասոն նրան չսպանեց, համա նրա ոտ ու ձեռը կապեց ու տարավ էն պառավի մոտ։ Մեր ու որդի իրար ճանաչեցին։ Մի քիչ էլ առաջ գնացին, Հասոն տեհավ, որ մի բանցր բոյով ու մի ղոչաղ չոբան դագանակը ուսին դրած դառներ ա արածացնում։ Էս գառնարածն էլ էր էն դևի որդին, զարթնե էս գառնարածը մի ուրիշ տղա էլ ուներ, որ տավար էր արածացնում։ Հասոն նրանց էսպես կապած թողեց ու ինքը գնաց, որ տենա էն ղոչաղ մարդը ո՞վ ա։ Նա գնաց էն գառնարածի մոտ ու ասեց, որ գա իրա հետ կռվի։ Նա սրան տվեց դագանակով, սա՝ նրան. համա Հասոն չունքի դհա ղոչաղ էր, նրան սպանեց։ Էս որ տեհավ պառավը սիրտը մղկտաց ու իրա մի ծամը կտրեց, տարավ քցեց էն սպանված գառնարածի վրա, որ իրա ազիզ բալեն էր, ու ինքն էլ տեղն ու տեղը մեռավ կսկծից։ Սրանից եդ Հասոն գնաց էն դևի տունը։ Դրսից տեհավ, որ ակռշկումը մի սիրուն, հուրի-փարի աղջիկ նստել ա։ Նա դուռը բաց արեց ու գնաց նրա մոտ։

Էն սիրուն աղջիկը Հասոյի ոտները ընկավ ու ասեց.

— Ես Գուշան թաքավորի աղջիկն եմ. սրանք ինձ զոռով իմ հոր մոտից փախցրին ու բերին ըստեղ, թե կարենաս սրանց ձեռից պրծացնի, մի մենձ լավություն արած կըլնես։

Հասոն ասեց, որ բոլորին էլ վաղուց սպանել ա, ու աղջիկը ուրախացած ասեց.

— Սրանից դենը ես քունը, դու իմը. քեզանից էլ լավ մարդ պտի առնե՞մ, քեզանից էլ ղոչաղ տղա կճարե՞մ։

Էս աղջիկը ասեց, որ ինքը լավ քոռ աչքեր կարա լավացնի. էս

բանի համար Հասոն շատ ուրախացավ ու ասեց նրան, որ իրա հոր աչքերը քոռ ա, ու ասեց, որ էթան լավացնեն։

Ղոչաղ Հասոն դևի տանը ինչ որ իրան հարկավոր բան կար վեր կալավ՝ թուր էր, թվանք ու էսպես ասպարներ, Գուշան թաքավորի աղջկա հետ ճամփեն բռնեցին ու գնացին։ Գշերը վրա հասավ, Մութը էնպես կոխեր գետինը, որ մարդ մարդի աչք հաներ, չէր իմանա, թե ով ա։ Նրանք մնացել էին մոլորված։ Թե էն տեղերում մնային ու իրանց շագիրը տային՝ վախենում էին, չունքի Հասոն հորից լսել էր, որ լավ չի խարաբա տեղ շագիր տալը, հենց ինքը իրա աչքովը տեհել էր, որ լավ չի։ Անճարացած Հասոն էդտեղ շագիր տվեց ու իրանք նստեցին, որ մի դուռում հաց գնեն բերնները, չունքի սաղ օրը զադ չէին կերել։ Մեկել ի՞նչ տենան՝ մի մենձ վիշապ էկավ ու նրանց չաղբովը փաթթվեց, գլուխը գրեց պոչի վրա ու կուչ էկած մնաց։

Հասոն թուրը հանեց, վրա գնաց որ սպանի, համա վիշապը՝ էն մենձ օձը ասեց.

— Ինձ զադ քյար չի անի, ո՛նչ թուր, ո՛նչ թվանք։ Թե ուզում ես, որ էրկսով էլ պրծնեք, գնա ինձ համար Սինամ թաքավորի հեքիաթը բեր, ես ձեզ կթողնեմ։ Էս աղջիկը թող ինձ մոտ մնա, նրան ես էնպես կպահեմ, որ մազին էլա վնաս չլնի։

Հասոն վեր կացավ ու ընկավ ճամփա։ Էն մենձ օձը Սինամ թաքավորի քիրն էր, օձի ձևով։ Գնաց, գնաց Հասոն, շատ ու քիչը աստոծ ղիդա, մի ջաղացպանի ռաստ էկավ, նրան բարով տվեց, նա էլ բարովը առավ, տարավ իրանց տունը ու ասեց, որ էսօր նա իրա ղոնաղն ա։ Նրա առաջ կիրակուր, բան բերեց. համա նա մի թիքա էլ ա չդրեց բերանը ու ամեն վախտ ա՜խ ու վա՜խ էր քաշում ու մտածում։ Ջաղացպանը հարցրեց, թե ինչու ա էդքան ա՜խ քաշում։ Նա մին-մին ասեց, ինչ որ գլխովը անց էր կացե ու ավելացրեց, որ էթում ա Սինամ թաքավորի հեքիաթը բերելու։

Ջաղացպանը ասեց.— Ես օրումս Սինամ թաքավորի անումը չեմ լսել. ես եռեսուն հազար տարեկան եմ նրա վրա զադ չեմ լսել։ Մենք իրեք աղբեր ենք, ես նրանց պուճուրն եմ, գնա իմ միջնեկ աղբոր մոտ. ով գիտա, մարդ ա, կըլնի որ նրա տեղը նա իմանա, յա թե չէ նրա վրա զադ լսած ըլնի։

Առավոտը թեզ-թեզ Հասոն գնաց միջնեկ աղբոր մոտ. նա էլ պուճուր աղբոր նման հրավիրեց իրա տունը ու կիրակուր բերեց

նրա առաջը, որ ուտի, համա նա մի թիքա էլա չկարաց ուտի ու միշտ ա՜խ ու վա՜խ էր քաշում։ Էս միջնեկ աղբերն էլ հարցրեց, թե ինչու ա ա՜խ քաշում։

Հասոն ասեց, որ էթում ա Սինամ թաքավորի հեքիաթը բերելու, չի գիտում, թե որդի ա նա. մենակ լսել ա, որ նա հայերի թաքավոր ա։

Միջնեկ աղբերը ասեց.— Ես էս ա քառասուն հազար տարեկան մարդ եմ, նրան իսկի չեմ ճանաչում ու ականջով էլ ա չեմ լսել, որ Սինամ թաքավոր կա աշխարհում։ Գնա իմ մենձ աղբոր մոտ, կըլնի որ նա իմանա։

Մեկել օրը Հասոն գնաց նրանց մենձ աղբոր մոտ ղոնաղ։ Սիրով նրան ընդունեց բարի ջաղացպանը ու նրա առաջ կիրակուրներ բերեց, որ ուտի, համա էն դարդը, որ նրա սրտումն էր, կարա՞ր թիքա բերանը դնի։ Ամեն խոսք ասելուց ա՜խ ու վա՜խ էր քաշում։ Ջաղացպանը հարցրեց, թե նա ինչու ա ա՜խ քաշում։ Նա իրա գլխով անց կացածը մին-մին ասեց նրան ու ավելացրեց, թե՝ չի՞ գիտում նրա տեղը ու յա թե չէ նրա վրա զադ չի՞ լսել։

Մենձ աղբերը ասեց.— Ես էս ա վաթսուն հազար տարեկան մարդ եմ, նրան չեմ տեհել. համա միտս ա գալի, երբ որ պուճուր էրեխա էի մորս խտտումը, մի խըժժոցի ձեն էկավ։ Ես մորս հարցրի թե՝ էն ի՞նչ ձեն ա, նա ասեց, որ Սինամ թաքավորը էթում ա Քառասուն ծովի կղզին։ Նրա համար սրանից ավելի բան չեմ գիտում։

Հասոն տեհավ, որ էլ ճար չի ըլնում, վեր կացավ աստոծ կանչելով, նրա սուրբ անումը տալով ճամփա ընկավ ու գնաց. իսկի ինքը չէր իմանում, թե ո՞ւր ա էթում։ Գնաց մի չինարու տակ, չունքի բեզարել էր՝ նստեց, որ դնչանա ու էլի վե կենա իրա ճամփի տուտը բռնի, էթա։ Մեկել ի՞նչ տենա՝ մի վիշապ նի ա ըլնում էն չինարու ծառը, որ արծվի ճուտերին ուտի։ Հասոյի մեղքը էկավ, տվեց վիշապին սպանեց ու պրծացրեց արծվի ձագերին. ինքն էլ ծառի տակ պառկեց ու քնեց։ Արծվի ճուտերը, չունքի իրանց նա շատ լավություն էր արել, գնացին իրանց թևը նրա վրա բաց արին, որ արևը նրա վրա չընկնի ու անուշ քնի։ Նրանց մերը էկավ ու տեհավ, որ մի մարդ ծառի տակ քնել ա. էնենց իմացավ, թե էկել ա, որ զիան տա իրա ճուտերին, վրա թռավ, որ նրան թիքա-թիքա անի, համա ճուտերը առաջ ընկան ու մին-մին ասեցին, թե

իրանց ո՞նց պրծացրեց վիշապի ձեռից։ Նրանց մերը, որ իմացավ նրա մենձ լավությունը, ինքն էլ գնաց թևերը բաց արեց ու փռեց նրա վրա, որ արևը նրան վնաս չտա։ Հասոն որ վեր կացավ ու իրա մոտ տեհավ արծվին, լեղին ջուր կտրեց ու թուքը ցամաքեց։

Համա արծիվը նրան ասեց.— Ուզի՛, ինչ որ կարամ՝ կտամ. դու ինձ մենձ լավություն արիր, իմ ճուտերը իսկի չէին մեծանում ու փայ ին ըլնում էդ վիշապին, որ սպանեցիր։ Զունքի դու էդպես մենձ լավություն արիր ինձ, ես էլ իմ դհից ուզում եմ, որ քեզ լավություն անեմ։

Հասոն նրա խոսքերից սիրտ առած ասեց, որ ուզում ա էթա Սինամ թաքավորի հեքիաթը բերի։

Արծիվը ասեց.— Թահո՞ւ, ես դեռ հլա պուճուր ճուտ էի, իմ մերը մի օր ինձ իրա մեջքին դրեց ու բարձրացրեց վերևը, էնքան որ առաջին անդամ սաղ աշխարքը մի կալի չափ էր էրևում. մի քիչ էլ բարձրացրեց ու հարցրեց թե՝ աշխարքը ի՞նչքան ա էրևում, ես ասեցի՝ մի մաղի չափ։ Մերս ասեց, որ էդ մաղի մեջ մի ձվի չափ բան ա էրևում, էն Սինամ թաքավորի ամարաթն ա։ Սրանից հետո իմ մերը էլի ներքև բերեց։— Արծիվը էլի ավելացրեց.— Ես քեզ Սինամ թաքավորի մոտ կտանեի, համա ծերացել եմ, թևերումս էնքան ուժ չկա, որ քեզ էնքան հեռու տեղ հասցնեմ։ Համա, թե որ ուզում ես քեզ կարենամ տանեմ Սինամ թաքավորի մոտ, մի սաղ տարի ինձ լավ պահի ու կիրակրի, որ էլի ջահելանամ, ուժս վրես գա ու կարենամ քեզ տանեմ հասցնեմ Սինամ թաքավորի մոտ։

Հասոն արծվին մի սաղ տարի կիրակրեց, պահեց. էնպես նա ջահելացավ ու ուժովացավ, հենց իմանաս թե նոր ա աշխարք էկել։

Արծիվը ասեց Հասոյին.— Վեր կունես քառասուն լիտր դմակ ու քառասուն լիտր գինի. երբ որ «զո՞ւ» կանեմ՝ գինին գցի, «զի՞» կանեմ՝ դմակը։ Դու իմ մեջքի վրա նստած մտիկ կանես աշխարքին, երբ որ աշխարքը առաջ մի կալ կերևա, հետո մի մաղ ու նրա մեջը մի ձվի նման բան, դու ինձ դպա էն ձուն ջուռ տուր, որ դենը էթամ։ Սինամ թաքավորի ամարաթը հենց էն ա։

Ինչ որ հարկավոր էր՝ Հասոն վե կալավ ու նստեց արծվի թևերի վրա։ Արծիվը թռա՞վ, թռա՞վ, էնքան բարձրացավ, որ աշխարքը մի մաղի չափ էրևաց ու նրա մեջը մի ձու։ Հասոն նրան դպա դենը ծռեց, ու վեր էկավ արծիվը Քառասուն ծովի կղզին։

Վեր դրեց իրա մեջքի վրայից Հասոյին ու ասեց.— Դու գնա Սինամ թաքավորի մոտ. նա կզարմանա ու կհարցնի քեզ, թե ո՞նց էկար էստեղ. դու ասա որ քնեցի ու մեկել տեհա, որ էստեղ եմ։ Մի քանի օր նրա մոտ լավ նոքարություն արա, երբ որ նա քեզ կսիրի, դու իրան ասա, որ իոա հեքիաթը քեզ ասի։ Նա ղորդ ա՝ կասի, համա քեզ հետ էնպես խոսք կկապի, որ հեքիաթը ասելուց հետո քու գլուխը կտրի. դու ասա, որ նա թողնի գաս դուրսը, ասուն աղոթք անելու ու հետո էթաս, սաքի թե գլուխդ կտրի նա. դու մհանով դուա կգաս ու էլի վրես կնստես, կբարձրացնեմ կտանեմ քեզ. նա էլ մեզ չի հասնի։

Հասոն արծվի խոսքերը լավ լսելով վե կացավ ու գնաց Սինամ թաքավորի ամարաթը մտավ։

Նա առաջ շատ զարմացավ ու ասեց.— Դու ո՞նց էկար էստեղ։

Նա պատասխան տվեց, որ մի օր քնեցի ու մեկել տեհա, որ էստեղ եմ։ Սինամ թաքավորը ուրախացավ, որ աստված իրա մոտ հողածին ա ղրկե։

Մի քանի օր նրա մոտ լավ ծառայելուց հետո մի օր Սինամ թաքավորին ասեց.

— Թաքավորն ապրած կենա, ինչ կըլնի, որ դու քու հեքիաթը ինձ ասես, սրտով ուզում եմ, որ իմանամ քու հեքիաթը։

Սինամ թաքավորը ասեց.— Ես իմ հեքիաթը ոչովին չեմ ասել, ու յա ում էլ ասել եմ, նրա գլուխը կտրել են. թե որ ուզում ես քու գլուխն էլ կտրեմ, իմ հեքիաթը կասեմ։

Հասոն ասեց.— Իմ արինը քեզ հալալ ըլնի, ինչ ուզում ես արա, թաքիլան քու հեքիաթը ինձ ասա։

Սինամ թաքավորը ա՞խ ու վա՞խ քաշելով իրա հեքիաթի տուտը բռնեց. «Ես հայերի թաքավորն էի. սաղ աշխարքը ոտիս տակը դողում էր։ Մի կնիկ ունեի՝ Գյուլ անմավոր։ Ես իրեք ձի ունեի՝ մինը կեծակից էր ծնվե, մեկելը քամուց, իսկ մեկելը կրակից։ Քանի էթում էին՝ իմ էս ձիանները լղարում էին. ես էնպես էի իմանում, թե ձիապաններն են մեղավոր, էսպես քսանիններ ձիապանի գլուխ կտրեցի։ Վերջը դուս էկա բազար, որ մի ձիապան բռնեմ։ Մի քոսա ռաստ էկավ ինձ. նրան հարցրի, թե կարա լավ ձիապանություն անի. նա ասեց, որ շատ լավ ձիապանություն կանի։ Էս քոսա մարդին բերի ու իմ ձիանների համար ձիապան դրի։ Համա էլի տեհա, որ քանի էթում՝ ձիաններս էլի լղարում են.

բերի որ քոսի գլուխը կտրեմ. նա ասեց. «Իմ գլուխը մի կտրի. արի դու քո շորերը տուր ես հագնեմ ու դու իմը հագի, գնա գոմը էս գիշեր քնի, տե՛ս, թե ինչեր ա ըլնում»։ Թաքավորը ձիապանի շորերը հագավ ու գնաց գոմը գշերը էնտեղ քնեց։ Աքլորականչին մեկ էլ տեհավ, որ իրա կնիկը ու զոքանչը էկան գոմը ու ձիապանին ասեցին, որ՝ թե՛ղ, ձիանները թամքի։ Թաքավորը ձիանները էն սհաթին թամքեց. նրանք նստեցին, իրան քամուց էլած ձին տվին ու նա էլ նստեց։ Երբ որ քամի էր ըլնում, թաքավորի ձին վազում էր, երբ որ չէ՝ չէր էթում, ու նրանք ծեծում էին, որ հետ ա ընկնում։ Էկան, էկան ու մի մաղարի մոտ կանգնեցին։ Գյուլն ու զոքանչը մաան ներս։ Էնդեղ մի արար կար, նրա մոտ նստեցին ու սկսեցին խոսել իրար հետ։ Գյուլուց ու էն արաբից մի էրեխա էր էլել։ Քիչ խոսեցին իրար հետ, կերան, խմեցին ու էլի ձիաններ նստեցին՝ դուզ տուն։ Թաքավորի ձին, չունքի քամի չկար, հետ էր մնում. նրանք ծեծելով առաջ էին գնում։ Սինամ թաքավորը էլի էկավ ու իրա շորերը հագավ, նստեց իրա տեղը ու քոսին բերեց ձիապանի տեղը։ Գյուլը իմացել էր, որ Սինամ թաքավորն ա էլե, որ իրանց հետ էկել ա մինչև մաղարեն ու ամեն բան տեհել ա։ Նա գնաց արաբի մոտ մի դագանակ կար՝ բերեց ու նրանով տվեց Սինամ թաքավորի մեջքին՝ էլավ գել, օխտը տարի նա գելություն արեց։ Էթում էր դելերի մոտ, չունքի նրանից մարդի հոտ էր գալի՝ ծեծում դուս էին հանում, էթում էր քաղաք՝ շները գզում էին։ Հետո, երբ որ օխտը տարին անց կացավ, Գյուլը էլի էն դագանակով խփեց ու դարձավ էշ։ Օխտը տարի էլ էշություն արեց։ Ով ուզում էր անփող տանում բանացնում էր սաղ օրը, տեր չկար, տիրական չկար։ Օխտը տարի էլ անց կացավ թե չէ, Գյուլը դագանակով խփեց ու դարձրեց լագլագ։ Էլի օխտը տարի էլ լագլագություն արեց. էս նրա համար ավելի հեշտ էր։ Օխտը տարի էլ անց կացավ, Գյուլը խփեց ու էլավ շուն։ Մի օր նա գնաց ղասաբխանի վրա, որ իրա համար միս ձեռք բերի ու կշտանա։ Տեհավ, որ մսի վրա իրա բեզրգյանը էկել ա ու միս ա առնում։ Երբ որ բեզրգյանը միս առավ ու դնում էր տուն, շունը նրա հետևից գնաց մինչև նրա տունը։ Բեզրգյանը չճանաչեց Սինամ թաքավորին, համա նրա աղջիկը ճանաչեց, որ Սինամն ա։ Բեզրգյանը իրա աղջկանը ղրկեց Սինամ թաքավորի տունը ու ասեց. «Գնա՛, տես թե տանը մարդ չկա, տախտի վրա մի փեսա կըլնի, վեր առ ու բեր»։ Աղջիկը գնաց տեհավ, որ տանը մարդ

չկա ու տախտի վրա մի փետ կա։ Վե կալավ բերեց ու շանը տվին՝ էլավ առաջվա Սինամ թաքավորը։ Իրար փաթթվեցին, ու Սինամը գնաց տեհավ, որ իրեքով էլ տանն են։ Փետով տվեց արաբին գվժի փուշ շինեց, զոքանչին շինեց ագռավ, Գյուլին էլ տվեց ու խնձոր շինեց, քցեց ջիբը։

Սինամ թաքավորը էս ասեց ու շանց տվեց Հասոյին ասելով.— Հրես էս խնձորը Գյուլն ա, էն փուշը արաբը, էն ագռավը զոքանչը. երբ որ նրանց էս փետով էլի տամ՝ կսաղանան։ Սրանից եդ ես ասսուց խնդրեցի, որ ինձ տանի Քառասուն ծովի կղզին, որ մարդու, իսանորդու չտենամ ու ոնց որ տենում ես ըստեղ եմ։

Սինամ թաքավորը իրա հեքիաթը պլծավ թե չէ, Հասոյին ասեց, որ պտի գլուխը կտրի, համա Հասոն խնդրեց, որ դնա դուս ու ասսուն աղոթք անի, հետո գա, իրա արինը նրան հալալ ա։ Հասոն դուս էկավ, արծվի մեջքին նստեց ու արծիվը նրան բարձրացրեց։ Սինամ թաքավորը տեհավ, որ Հասոն ետացավ՝ դուս էկավ տենա ի՞նչ էլավ։

Տեհավ, որ Հասոն բարձրանում ա, հետևից ձեն տվեց։ Նա հետ թամաշ արեց թե չէ՝ Սինամ թաքավորը իրան քցեց ծովը ու խեղդվեց։

Հասոն գնաց վիշապին Սինամ թաքավորի հեքիաթը ասեց, նա իրա կաշին պատռեց ու դուս էկավ մի սիրուն աղջիկ։ Հասոն ու Գուշան թաքավորի աղջիկը գնացին, Հասոն իրա հոր աչքերը նրա ձեռով լավացրեց ու ինքը պսակվեց նրա վրա. օխտը օր օխտը գշեր հարսանիք էլավ, կերան, խմեցին ու քեֆ արին։